

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլիարիոյ համար

հարկան ֆրք. 10

վեցամսեայ " 5

Արտասահման

հարկան ֆրք. 12

վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ



Գրութիւնք եւ չին
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք "Հայեղի" ին մէջ աղոյր երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուան թղթաբեր)

Կ. Պուլիս

Կառավարութեան մէկ հրահանգին համաձայն, Ս. Պատրիարքը շրջաբերական մը ղրկեց մայրաքաղաքի եկեղեցիները, պատուիրելով որ տղաքը առանց պատուաստի չի թողուին եւ առ հասարակ ամեն ոք պատուաստուի:

Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիս. Ասլանեան և Քլիի առաջնորդական տեղապահ Տ. Վահրիճ վարդապետ շաբաթ օրը մեկնեցան Կ. Պոլսէ Լոյսի Աթոյո շողենաւով, ասոնք Աւագ Հինգշաբթի օրը կը հասնին Տրապիզոն. հետեւաբար Զաքիի սօնը հոն անցունելէ ետքը պիտի շարունակեն իրենց ուղևորութիւնը դէպի Վան:

Վանայ առաջն. տեղապահ Տ. Ստեփան վարդապետ Աղազատեանի կողմէ անցեալ շաբաթ օրը Պատրիարքարան հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ

քաղքին զանազան հաստատութեանց մէջ դանուող որբերը առաջնորդարան երթալով՝ ջերմապէս խնդրեր են որ Վարագայ վանքին Որբանոցը ընդունուին իրենք:

Ամենայն հայոց հայրապետը Էջմիածին հասած է ապրիլի սկիզբը: Ն. Ս. Օծութիւնը մարտ. 24ին Շուլավէրէն անցած պահուն, երբ Սաղախլուի կայաւանը հասեր է, Շուլավէրի հայ գիւղացիները խմբովին ընդառաջ դացեր են: Գիւղապետը ըստ սովորութեան, ալ ու հաց մատուցեր է: Ս. Հայրապետը օրհներ է ժողովուրդը և խոստացեր է մէկ ու կէս ամիսէն այցելել Շուլավէր:

Արեւելք օրաթերթը անցեալ տարուան պէս այս տարի ալ խոստացեր էր ի նպաստ Աղդ. Հիւանդանոցի Ծաղկավարդին բացառիկ թիւ մը հրատարակել, գրական և բարեգործական, բայց կըսեն թէ նախանձոտ պաշտօնակցի մը խառնակիչութեանը շնորհիւ (որուն երեսը Աստուած ամուր պահէ) խոստացուած թերթին հրատարակութիւնը արգելուել է, որով Արեւելքի խմբագրութիւնն ալ պարտաւորեր է ցարդ ի հա-

չիւ նոյն նպատակին իրեն հասած 9138 շրուշի գումարը յանձնել Ս. Պատրիարքին, միանգամայն հրաւիրել է իր ընթերցողները որ եթէ այդ թիւին առթիւ նուէրներ ունին ընելիք, ուղղակի Պատրիարքարան ղրկեն:

— Կերեւի թէ ասկէ ետքը Տաճկաստանի մէջ հայ վարդապետները մատի վերայ պիտի համրուին. որովհետեւ գրեթէ ամենքն ալ եպիսկոպոսանալու համաճարակէ մը բռնուած են: Զատկէն ետքն ալ Ռուսթոյի, Կեսարիոյ, Պիլէ-ճիկի, Պուրսայի և ուրիշ ֆեօշէ պոմախ թեմերը գտնուող վարդապետներէ բաղկացեալ. . . կարաւան մը ճամբայ պիտի ելնէ գէպի էջմիածին, եպիսկոպոսակոն ստոժեան ընդունելու:

Աստուած սեղանէք տայ:

Թաթար բազարճրքի ազգայինք ի նպաստ հայրենիքի սովեակներուն 380 ֆրանք հաւաքելով Պատրիարքարան ղրկած են:

Իմաց կը տրուի մեզի թէ շնորհունակ քահանայ մը սովորութիւն ունի եղեր ամեն օր, նոյն իսկ իր Պատարագիչ եղած օրը, օրհնութեան շարականներու ատեն խուցը քաշուիլ և . . . սիւ կար ծխել:

Երկու ժամ՝ առանց ծխախոտի չի կրնալ համբերող այդ քիւրեմի տէրպապին կազդարարենք որ, եթէ ուրիշ անգամ նոյն ընթացքին մէջ գտնուի, յակննէ անուանէ պիտի երևնայ ի հայելոյ:

— Աւագ հինգ շաբթի իրիկուն տեղույս Ս. եկեղեցւոյն մէջ երկու քահանայք, Տ. Գեորգ և Տ. Յովակիմ, Ոստալուայի արարողութիւնը կատարեցին. ի նշան խոնարհութեան ըստ օրինի իրարու ոտք . . . չի լուսլով, որ ժողովուրդին գայթակղութեանը պատճառ եղաւ:

ՆԵՂԸ ՄՆԱՅՈՂԻ ՊԱՏԱՌԱՆԲՆԵՐ

Հիւրմուգեան Տ. Գեորգ քահանան այս անգամ ալ Վառնայի հայ թերթերուն մէջ մէկ նամակ գրելով, կը խոստովանի թէ Իս-

ԲԸՆ Ե ԿԱՏԱՐԵՐ Ժանուցեալ Վրկնաժու-նութիւնը, և կը յաւելու որ, Տէր Մարտիրոս քահանայի և հոգաբարձութեան արտոնագրով ու հրամանագրովը պսակել է, մինչդեռ մենք Հոգաբարձութենէ ստուգեցինք թէ ատանկ արտոնագիր կամ հրամանագիր մը տրուած չէ՝ իրեն և արդէն չէր կրնար ալ տրուիլ: Տէր պապին հրամանագիր կամ արտոնագիր ըսածը ինչ ըլլայ աղէկ. — 10 ֆրանքնոց ստացագիր մը, որ ամեն կնուք, հարսնիք ու նշնեցեալ ունեցողներու կողմէ եկեղեցւոյ սնտուկին յանձնուած դրամներու փոխարէն ըստ օրինի կը տրուի թաղականի քարտուղարութեան կողմէ: Ստացագիրը՝ հրամանագրի կամ արտոնագրի հետ չի շփոթենք:

Տ. Գեորգ քահանան միանգամ ընդ միշտ պէտք է գիտնայ որ, եթէ մինչև իսկ ուրիշ քահանայ մը, և կամ թաղ. կամ հոգաբարձութիւնը իրեն հրաման տուած կամ զինքը արտոնած ըլլան, դարձեալ ինքն է պատասխանատուն: Ամեն պսակադրութեան պատասխանատուն ուղղակի պսակող քահանան է հոգեւոր իշխանութեան առջեւ: Եկեղեցւոյ օրէնքներու գոնէ այսքան տեղեկութիւն չունեցողի մը համար հարկաւ շատ դժուար է քահանայութիւն ընել:

Ասկէց զատ, ինչպէս կըլլայ որ Տ. Մարտիրոս իրեն հրամայած ըլլայ պսակել, երբ այս քահանան սոյն խնդրոյն մէջ Պատրիարքարանի դիմած էր և անկէ պատասխանի կը սպասէր, մինչդեռ Տ. Գեորգ քահանայ այդ պատասխանին գոյստեանը սպասելու համբերութիւնը չունեցաւ:

Տ. Գեորգ քահանան աւելի լաւ կընէր որ իր պաշտօնին վերաբերող օրէնքները, կարգերն ու սովորութիւնները քիչ մը ճիշդ ընելով ուսումնասիրեր, փոխանակ անգին ասդին պտտելով ան աս բամբասելու, որ իր կոչումին հետ ոչ միայն յարաբերութիւն չունի, այլ և ուղղակի անոր հակառակ ալ է:

Մէկ մըն ալ, Տէր Գեորգ քահանան, ԸՍՏ ՕՐԻՆԻ, Առաջնորդէն կամ Աւագերեցէն ԳԼԻԱՌԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ մը առած ըլլալու էր նոյն պսակը ընելու համար, այսօր ունի՞ ձեռքը ատանկ ամանագիր մը. — ոչ. ուրեմն պատասխանատու է ք

ԶԱՏԻՎ

ԲՈԺՈՒԹԻԿԻՆ ՆՈՒԷՐՆԵՐԸ

Երէկ առաւօտ Պ. Բոժոժիկ կողով մը շարժած ու արին բրտինք մտած, տքալով խմբադրատուն մտաւ:

— Ի՞նչ է ան Բոժոժիկ, կողովի՞ք մէջ ի՞նչ կայ:

— Հաւկիթ:

— Հաւկիթ մի՛. հա՛, հասկցայ անշուշտ մեզի համար ըլլալու է. կեցցե՛ս Բոժոժիկ որ մեզ քիչ շատ ծախքէ մը կազատես:

— Չէ՛, չէ՛, կեր Տէ գոհացիր, ասոնք ուրիշ տէրեր ունին:

— Տէրեր ունին մի՛:

— Այո՛, իմ կողմէս նուէր պիտի զրկուին:

— Որո՞նց:

— Կեցիր, հիմա կիմանա՛ս:

Այս կողովը վար գնելէ ետքը, հաւկիթները իրենց հասցէներուն զրկելու համար սկսաւ սա կերպով կարգի դնել.

Ամենէն առաջ Բուրի մը հաւկիթ իր անցեալ կեանքը ողբացող Պ. Նազարբէկին:

Մարտի մը հաւկիթ Թուրքիան աւերելու զոգով Դրօշակին:

Կոռնկի մը հաւկիթ՝ Արմէնիան, որպէս զի հայրենի աշխարհէն լուրեր տայ ու ծայրագոյն Արեւելքին պոչը քիչ մը ձգէ:

Արծիւի մը հաւկիթ՝ Լաոմէնիին, որ ամպասպաց երթալ հասնի ի Լահէյ. հէյ կիտի հէյ:

Ընկողքի ձուկի մը հաւկիթ՝ Մարտի խմբագրութեան, զոր ատկելը մասնագետի գործ է:

Սոսակի մը հաւկիթ՝ Անահիտին, իր երգերը լաւ ընտրելու և եղանակելու համար:

Ծիծեռնակի մը հաւկիթ՝ Միւլթիւնին, որ կը պնդէ թէ իր բոյնը ամեն տեղ է:

Չղիկի (կէճէ գուշու) մը հաւկիթ՝ Նւր կեանքին, հին կեանքը նորի վերածել ջանալուն փոխարէն:

Կաքաւի մը հաւկիթ՝ Տիգրիսին՝ կուսակցութենէ կուսակցութիւն կաքաւելուն փոխարէն:

Բազէի մը հաւկիթ՝ Տաւրոսի լեռներուն կարօտը բաշող յուսահատ հայրենասիրին:

Փիւնիկ թռչունի մը հաւկիթ՝ հինգ աւիս կեանք... չունեցող Փիւնիկ հանդէսին:

Տասներկու հատ խցնօղի հաւկիթ՝ Շարժումի խմբագրութեան, թիսերու համար, որպէս զի տուգինա մը խոռոչի պէս ցատկը տան ու կծծան խմբագիրներ հասցնէ:

Տասներկու հատ Չաղաւնօ ի հաւկիթ՝ Իրաւունքի խմբագրութեան, նշնալէս թըրսերու համար, որպէս զի ան ալ չաղանօղի պէս քովետի քալող օգնական խմբագիրներ հասցնէ:

Հնդկահաւի մը հաւկիթ՝ Տ. Գ. Հիւրմիւղեանին, մէկ երկու օր Տ. Բ. Վրդ. հեղահահաւի պէս խուրուրդի ըլլալու գեղուն փոխարէն:

Պինգ խաշուած Սագի մէյմէկ հաւկիթ՝ Պ. Աւարդօի և Պ. Գուրպէթի՝ իրար կտորել աշխատելու (տօխուշմիշ ըլլալու) համար:

Արուեստական (գաճէ) հաւկիթ մը՝ բողբաջատնտեսագետ տնօրէնին:

Բաթի մը հաւկիթ՝ բաթի պէս աղմուկ հանող մանկապարտէզի մը տնօրէնին:

Ճանձի մը հաւկիթ՝ Ամիրալի սպայակոչ տէն քիպարձա ճամբուած դաքիթէնին:

Հաւկիթի մը ճերմկուց՝ պառաւ Շողեր տուտուին, երեսը քսած պոյտին ճիղաւ տալու համար:

Մէյմէկ հաւկիթի քեղնուց կրկու հաւկիթի կեղև միւսիւ ֆինկթօնկներու, որոնք աւագ շարժուն կանանց վերնատան դրանք առջև պապուկի պէս սլքատցին:

Հաւկիթի նիյէթով թեթեամիտ պարոն մը՝ օրիորդ Կէտիէտին. զայն... ահա ային զարնելու համար:

Ճղիլ հաւկիթ մը՝ նշանածը խաբելով առնող քալող միւսիւ ճըլխեանին:

Օձի մը հաւկիթ՝ խմբագրատուններէ վռնտուող Շ. . . ին, մերթ ընդ մերթ հըրապարակը թունաւորել ճգնելուն փոխարէն:

Մողէսի (քէութէնքէլէ) մը հաւկիթ՝ քսի յոյսախօսութեան առաջին կարգի ուսուցչու հի տիկին ճանեագտընանին:

Ագռաւի մը հաւկիթ՝ շանթէօզ մատամմատմազէլ Սիրտ-Վառդեանին:

Կրիայի մը հաւկիթ՝ անկողինը (բալթօն) կրիայի պէս շարժած պտտող ոստիկանապետ Պ. Ժավէրին:

Աւ ամենէն վերջը՝ Սատանայի մը հաւկիթ ալ մեծապատիւ Բոժոժիկիս, որպէս զի զայն մերթ ընդ մերթ գլտորելով աղւոր կամ ագեղ բարքերը երևան բերեմ:

ԶԱՆԱԶԱՆՔ

ՀԱՄԱՐՈՅԻ ՄԸ ԳԻՆԸ

Լոնտոնէն հասած թերթեր հետաքրքրական լուր մը կը հաղորդեն դատավարութեան մը մասին՝ որ համարորի մը շուրջը կը դառնայ։ Դերասան մը՝ Լոնտոնի պանդոկներէն մէկուն մէջ կ'իջևանի և ամբողջ շաբաթ մը կ'անցընէ հոն։ Շաբթուն վերջը, պանդոկին սպասուհիներէն մէկը՝ թօմպուլիկ, կարմրուկ աղջիկ մը, որուն ոչ այտերուն նուազ կարծրութիւնը կը պակսէր, ոչ ալ շրթունքներուն կեռասի գոյնը, կուգայ շաբթուան հաշուեցուցակը ներկայացնել իրեն։ Աւելորդ է ըսել թէ դերասանը աչքերը գոց կը վրձարէ և, — վարժութեան խնդիր, — համարյոք մըն ալ կ'աւելցնէ անոնց վրայ։ Սպասուհին սակայն, կերևայ թէ դերասանական բարբերու ընտալեցած չըլլալուն հետ, չէր ալ ակորժեր այդ տեսակ կատակէ, յաջորդօրէն իսկ Մարկաթի ոստիկանական դատարանին առջև դատ կը բանայ դերասանին դէմ, զայն ամբաստանելով թէ պատուին դպչած էր։

Դերասանը՝ պարապ տեղը ինքզինքը արդարացնել կը փորձէ. պարապ տեղը մեղմացուցիչ պարագաները մատնանիչ կ'ընէ. գատարանը 125 ֆրանք տուգանքի կը դատապարտէ զայն. դատապարտութիւն մը՝ որ ամսուան մը բանտարկութեան կը փոխուի, քանի որ դերասանը այդչափ դրամ չունէր։

Այս ամենուն մէջ սակայն, եթէ կայ մէկը՝ որ ամենէն աւելի զարմացած ըլլայ, ան ալ սպասուհին է, որ բնաւ մտքէն չէր անցընէր թէ իր մէկ այտը ինքնին կրնայ 125 ֆրանք արժէլ։

Այս դատապարտութիւնը անշուշտ իբր հետեանք պիտի ունենայ սա պարագան թէ դրամ ճարելու հետամուտ աղջիկներ՝ որոնք դերասան մը ու ոչ-դերասան մըն ալ գլխէ հանելու չափ կարծիք ունին իրենց այտերուն վրայ, պիտի ուզեն թակարդ լարել Լոնտոնի զգախոտներուն... 125 ֆրանքին ի խնդիր։

ՓԱՅՏԻ ՍՐՈՒՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շատ տարօրինակ արկած մը պատահեր է այս օրերս Բարիդի մէջ։ Պիտիքէթի փորձեր կատարուած պահուն՝ երկանիւններէն մէկը մարդու մը կը կառչի, և անոր արունգը երկուքի բաժնելէն ետքը, երեք մէթը հեռու կը նետէ զայն։ Մարդը ահագին վայնասուն մը կը ձգէ, կը պոռայ, կուլայ, մինչդեռ չորս կողմէ օգնութեան փութացողներ զայն դեղարան մը կ'առաջնորդեն։ Երեւակայեցէք օգնութեան փութացողներուն զարմանքը, երբ դեղարանին մէջ կը տեսնեն թէ մարդուն երկուքի բաժնուած ոտքը... փայտէ էր և թէ բնականաբար պատճառ մը չունէր այդ աստիճան վայնասուն մը ձգելու։

Մարդիկը սակայն, իրենց զարմանքէն դեռ չսթափած, երիտասարդ մը կը տեսնեն որ ձեռքերն ու դէմքը արիւնլուայ, դեղարանէն ներս կը մտնէ յայտարարելով. «Մօտակայ զբօսարանի մը մէջ քիչ մը հանգիստ առնելու գացած էի, երբ ահագին առարկայ մը նետելով փշրեցին ապակին՝ որուն կտորները այս արիւնլուայովիճակին մէջ ձգեցին զիս»։ Եւ հաստատելու համար իր ըսածը, զրպանէն կը հանէ «ահագին իրը» զոր ուշադրութեամբ դիտած անգամ չէր և զայն կը ցուցնէ ներկաներուն՝ որոնք կրկին զարմանքի մէջ կ'իյնան, տեսնելով քր «ահագին իրը» փայտէ սրունգին միւս մասն էր՝ որ պիտիքէթին բաղնիքէն թռած գացած էր զբօսարանին պատուհանը կտորելու։

ԿԱՍԻԹ

ԱՌ ՕՐ. Յ. ՆՈՐԱՍԵՐԵԱՆ

Եկո՛ւր Ասյիմ, ազնիւ աղջիկ,
Ինչո՛ւ աշղխարհի հիւժեւ ես,
Վախկնամ քեզ աչքու ծրնոյդ
Տուած եմ խիստ շատ երես.
Բայց ես կըժու պիտի խօսիմ,
Մի՛ բարկանար, կ'աղայնեմ,
Կ'ուզեմ քեզի հասկըցնել
Թէ ի՛նչպէս շարժիս, ի՛նչ կընես.

Օրհորդաց պարսֆն առաջին
Տանհիկնութիւն ուսնի է,
Դու կը կարծես թէ քու պարսֆրդ
Վարդենուն պէս բուսնի է.
Խորասակրդ թէ միմիայն
Փախազներուդ հասնի է
Կը ցաւիմ որ այս աշխարհքս
Դու շար սրիսայ դասեր ես:

Սա պիղծ ԾՕՏԱՆ քու կուսական
Պարկեշտութիւնդ կը կորզէ.
Դու Հայունի պիտի ըրաս.
Մայր ըրալու քեզ մարզէ.
Վերցն'որ շինծու զանգուրներդ,
Ազնիւ ճակաս մը պարզէ.
Նորձեւութեան մը պատճառաւ
Խեղճ կեանքդ ընդհատեր ես:

Այլիդ կույն ու ընկոններուդ
Ծարիր քրտեր կը շրջիս,
Միսս ներկերդ ալ չես հաշուեր,
Կը խնայեմ իմ գրոյիս.
Փեշազարդ մեծ գիտարկովդ
Կարծես երկիւնք պիտի քրոյիս.
Ձեռ գիտեր, ո՛ր տեսնուած է
Կիւն մը այսչափ պաղ երես:

Ներկը ներկին յոյս երեսդ
Անպոս երկիւնք դարձուցիր,
Այդ դեմքով դու ինչ կը դառնաս,
Գէթ մօրդ ալ չի հարցուցիր.
Խոշոր քարձ մ'ալ, յիշեմ ինչո՞ւ,
Նիհար կործիկդ քեզուցիր,
Կարծուի թէ քարկենդանի
Կերպարանք մը մտեր ես:

Մէկ օրական պարեմնեան անգամ
Հայրդդ հազիւ կը ճարէ.
Կուս մը անգամ չի վասակիր
Եղբայրդ ալ գորկ արհեստէ.
Պատանի մը կուզես խաբէր
Գիշեր ցորեկ միտքդ այս է.
Տեսա՛ր ինչո՞ւ նիհարցեր ես,
Քու խելովդ հասեր ես:

Բամբաստողներ յոռ չեն կենար.

Ամեն տեղ քեզ կը խօսին,
Դու՛ աջքդ գոց մէջն ես ինկեր
ԾՕՏԱՆ քացած փոսին.
Բայց թէ խելիդ տուն կանչելով
Հետեւիս իմ խրատին,
Անգամ մըն ալ ասանկ կըստիք
Ձեռ ոտեր իմ մատերէս:

Ե. Վ.

“ՓԱՐԱՅԸ ՎԵՐԷՆ ՏԻՒՏԻՒՅԻ ԶԱԼԱՐ”

Քա Հոռոմի հանրմ, աս ի՛նչ բաներ
Կըլլայ կոր տէ՛ խապար չունինք:

— Կէնէ ի՛նչ է եղեր:

— Կնիկ մը ունեցողին կնիկ մըն
ալ կուտան կոր:

— Իմացայ քուրուկ, իմացայ, Աս-
տուծոյ աշկին մեռնիմ, քիմինէ վերեր
տոյուրուր՝ քիմինի սուտուզ էօլտիւրիւր.
պէս պէլլի հացին օխան 30 փարալի ին-
չաւ տէ՛յի մէկ հատ մըն ալ կառնեն կոր.
երբ չէ նէ՛ անլրմանս կըսէ քի՛ “Դա՛րը,
օրթալըդ քէսատ տըր. հէր քէս՝ պիւր
աղըդ էքսիք օլտուն տէյի էվինտէն թէս.
թէրէյի պիլէ գալտըրըյօրդ. օ իսէ՛ ան-
դին մէկ հատ մը ունեցողը մէկ հատ
մըն ալ կառնէ կոր:

— Քա չէ՛, քուրուկ, չէ՛, վարիյէթ
ունեցող մէկըն ալ չէ եղեր:

— Էյ ինտո՞ր իղին տուեր են.

— 4 հոգի շահատէթութին ըրեր
են քի՛ կնիկ չունի տէյի:

— Մեղայ . . . էլ զաւժին տուող
տուն կը գարձունեն կոր քի՛ 4 շահի-
տի խօսքով կնիկ կառնեն կնիկ կուտան
կոր:

— Ես ալ անանկ ըսի.

— Տալոջս տագրը 12 տարի է մո-
թանալով կնիկը ձգած կապրի կոր, չիւն-
քիւ գէշութիւնը խալաթ ըրած է, զա-
վալըն նորէն կարգուիմ տէյի անտար
ճըվըլայ նէ՛ իղին չի տուին, ասոր ին-
տո՞ր կուտան կոր:

— Դուն ա՛ն պիտի ըսես, մէկ ծա-

ըը գլխին է. ամենուս էրիկ մարդը կարգուրէն 1—2 տարի ետքը կնիկէն պըխմիշ ըլլալով պաշխամը առնել կուզէ ամա, քուրուկ, հէրքէսին արշընընա կէօրէ պէզ վերերէն մի:

— Դա աղէկ միտքս ինկաւ, աս գիշերը Լեւոնիս մէքթուպմը կրել տամ տալովս տագրովը զրկեմ քի հէմէն էլլայ Վառնա գայ. 4 շահատով կը կարգենք:

— Չէ, պօշ տեղը մարդը տէտիրկին մընէր. տակէն չաքան օղլու ելեր է ըսելով՝ արթըխ ատ առէթը վերուցեր են:

— Դուն ատոր հիշ մի հաւտար. մէկ երկու ամիս անցնելէն ետքը մէկ չէ՝ էրկուք պիլէ կօւտա՞ն. մարդոցը աշկը փարային է:

— Աճապա կուտան կըսես.

— Հէլպէթ, հէմ գիտցած ըլլաս քի՛ պաշխա տեղեր աղ զալէթաները կարդացողները նէֆէսին Վառնա պիտի առնեն մէյմէկ կնիկ տահա առնելու համար:

— Արթըխ ատանկ բան ալ չըլլար.

— Չըլլար մի. . . ասիկա ինտո՞ր եղաւ.

— Արթըխ հաւատքնին ալ պիտի ծախենք.

— Սիմա հանըմ, կը նայիմ քի աճայիպ բաներ կըսես:

— Հասկցայ, ըսել կուզես քի՛ փարայը վերէն տիւտիւլի չալար:

— Սալթ տիւտիւլք տէյիլ՝ տալու զուռնայը պիլէ չալար:



Պարսէր տիկին մը ի Ռուստուզ մէկ բանի երիտասարդաց հետ խօսակցած պահուն, իր եօթը տարեկան խիստ անառակ տղան մօրը ըսաւ.

— Մայրիկ, ինծի քաջտուն փարայ տուր, պիլես պիտի առնեմ:

— Անմօթ, կորուէ՛, մարդու առջև ստակ չեն ուղեր:

— Անանկ է նէ պարտք տուր:

— Աս ինչ խօսք է, միթէ՞ ես քեզի պարտք ունիմ.

— Վա՛յ, ինչ շուտ մոռցար. երէկ իրիկուն գլխէդ քսան հատ ճերմակ մազ չի քաշեցի. հատին երկու փարայ պիտի տայիր:

Անցած օր. Մուսալլայի քրճարաններէն մէկուն դուրսի կողմը նստող յաճախորդ մը չըջուէ. ձկնախաճառ մը կը կանչէ.

— Կէ՛լ պաշալըմ. քաջա՛ վերիյօրսըն քարակէօղիւ.

— Այաճապսան թանէսի օթուզ փաւա օլուր. պիլինճի եալը պալըք տըր.

Այս միջոցին գիմացի խանութէ մը «պալըզ ճը պուրայա լիէլ» կը պողայ մէկը:

Ձկնախաճառը գլուխը ձայնին եկած կողմը դարձնելէն ետքը, ձուկին քապրան առածին պէս դէպի այն կողմը կը սկսի երթալ.

— Ներէյէ՛ կիտիյօրսուն պէ՛.

— Տուր ճանըմ. պալըզ իսթէյօրսլար.

— Պէն տէ իսթէյօրում. էվլէլ պանա վէր տէ սօնրա օրայնա կիթ.

— Օլմազ. օ պիլիմ քառքիյա տամը տըր» և դէպի այն կողմ կը վազէ.

Իսկ յաճախորդը զարմացումով ինքնիրեն սա խօսքերը կըսէ, «նէ կիւնլէրէ գալտըգ աման եարապպի, պիր իքի գաւակէօզ պալըզը ալմագ մէսէլէսինտէ պիլէ բարթիզանլըք տավասը սիւրիւլիյօր»:

ԶԲՕՍԱՐԱՆ, «ԿՐՕՁՏ»

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕՅԻ ԾԵՂԻ ԴԵՄԸ

Ամառնային սոյն գեղեցիկ զբօսարանին բացումը տեղի պիտի ունենայ վաղը, (կիրակի) տնօրէնութեամբ Տ. Տիգրան Թիւֆէնկճեանի. որ արհեստին մէջ ունեցած յաջողակութեամբը միշտ կը գոհացնէ իր բազմաթիւ յաճախորդները:

ԳԱՐԳԱՅՈՒՐ ԱՎՈԳԱՅ

(Կէյքն և խախտեցէն)

Պիլիմ գաւ-գաչ ավօգաթ միւշթէ-
րիէրինի սավորգտան սօնրա արգատա-
չընա խիթապէն .

— Պէշ լիրա իշին ուշաղը կէօն-
տէր տէաի իսէ, նիշին պէն կէլիր ա-
լըրըմ տէտին, պանա էմն յէթ էտէմէ-
տին աճապ :

— Վալլահա օնուն իշին տէյիլ,
եալընըզ հէրիֆին մաղաղասընըն հալի-
նի պիր կէօրմէք իսթէր իտիմ :

— Պէն կէօրտիւմ, իսթէրսէն թա-
րիֆ իտէյիմ . ֆաղաթ պիրպիրիմի-
ղէ օյունա չըգարսագ էյի օլմազ պունու
պիլ :

— Սանա օյուն էտէրմիյիմ, նէ՝
պու արթըզ պէնիմ ֆիքրիմ, պու ա-
տամտան նէ՝ գատար բարա սըղտըրա-
պիրիւղ օնու սղնամագ տըր : Հայտէ
օտանը գաբատա կիտէլիմ, չօնուզ օլմա :

Վէ օտայը գաբայըպ՝ իքիսի պիր-
լիքտէ պէշ լիրայը ալմաղա կիթտիլէր :
Պէրիաէ պէվալը գապըն հէօճէթի ի-
լամ եէրինէ գապուլ իտիւպ մէնտիլի-
նին իշինէ սարտրգտան սօնրա ուլուղը-
նը տօլրու էվինտէ ալտը վէ գայնանա-
սընա խապէր կէօնտէրտի քի հէման էվ-
տէն չըգսըն . աճագ պիր գաչ կիւն
պօչպօչունա պէքէտիքտէն սօնրա՝ եինէ
գաւ-գաչ ավօգաթընա միւրաճաթ իթ-
տի :

— Պարեւ ձեզ, կեսուր օլաճախըս
մին պահաթ տունէն շեւլար կոր, սըվոր
հախէն երբ պիրտի գաս :

— Վայ . . . ամմա սէն ուզուն էթ-
տին, սանա տէտիք քի, պէշ լիրայը վէր,
իշին թէքիլ պիթսին, սէն էմնիյէթ
էթմէտին, պիլիմ պօրճուսուզ իլամ էթ-
մէք իտի, էթտիք, օնտան սօղրասընա
գարըշմամ :

— Թէք սա տունէն ելլայ, պէշ լի-
րայը տա վէրէյիմ, ինչընեմ եավրում :

— Պու կիւն վէրէճէքմիսին :
— Իսթիւմտէ տէյիլ, էվտէ տիր,
եարըն կէթիլում օլմազ :

— Օլուր նէյէ օլմայաճագ :

Պունուն իւղէրինէ գատըն տըշարը
չըգտըգտա՝ քէնտի քէնտինէ՝ եանըն-
տա պուլունան իլամը պիրիսինէ օգութ-
մայա գարար վէրտի վէ պիր արգու-
հալճընըն տիւքեան ինա կիրտի :

— Գուզում էֆէնտի, շու իլամը օ-
գու տա իշի պանա էթրաֆլըճա աղնաթ,
զէրէ էօլիւմիւմէ սէպէպ օլաճագ պու
իշ :

— Բէք էյի, պուլուլուն օթուրուն,
վէր տէ օգուեայըմ, տէյէրէք պաշլար
օգումաղա :

« Պսթիհտէ Հօճա Խայրէտտին մա-
հալլէսինտէ, Բիւշիւք Գարաման ճատ-
տէսինտէ, Էվգաֆ կէտիքեաթընտան,
կէտիկի վէ մէրհում ֆիլան վագֆըն-
տան, պիր թարաֆը լէպլէպիճի տիւք-
քեանընա մութթասըլ, տիկէր թարա-
ֆը թարիքի իլէ մահտուտ թէրպիէն
4000 մէթրօ արսա իւղրէ պիր պապ վա-
սի ախշապ խանէ իլէ պաղչէ վէ գուեու
էրմէնի-միլլէթինտէն վէթէպաայը ճէօլ-
լէթը Ալիյէտէն Վասիլիկ պինթի Մը-
կրտիշին . . . :

— Գուզում էֆէնտի, Վասիլիկ քիմ
տիր :

— Գօնայըն պունտան էվվէլքի սա-
հալը :

— Էվվէլքի սահալը գօճամ ըտը
էօլտիւ . մեղսյ, պիլտէ Վասիլիկ իսմին-
տէ ատամ՝ եօգ տըր, վախնամ՝ եաղնըշ
եաղմըշլար իլամը :

— Պու իլամ տէյիլ գատըն, էսկի
պիր հէօճէթ տիր :

— Քա ինչ կըսէ. պու տավա իլա-
մը տէյիլ :

— Տիւզ էսկի պիր հէօճէթ տիր :

— Եա աբուգաթըմ՝ պունու իլամ
տէյի վէրտի նէ :

— Սէնի ալտաթմըշ, ա՝ գատըն :

— Վույ ծոնը գլխու տէյէրէք,
տօլրուճա ավօգաթըն օտասընա կիտէր,
օ արա տա եաղ թիւճճարը նիգօլաքի
քէնտի իշինտէն պիր խապէր ալմագ ի-
շին հէնուզ գարուտան իշէրի կիրմիշ
իտի :

— Քա սիզ պէնի չօնուգ եէրինէ
գօյտունուզ . իրաւոր ինչտանը ավազ ու-
նիմ նէ կը պօւամ . խանլըյը պաշընը-
ղա թօբլարըմ եանի :

— Նէ՛ վար, նէ՛ օլտուն, թէլաշըն նէ՛ տիր:

— Յիտի ութանըպ արլանմաղլար, իլամ էթտիք տէյէրէք պէնիմ կիպի ֆուգարէյի ոլտաթըպ, իլամ տէյի էլիմէ պու հէօճէթի վէրիւսինիզ:

— Հէօճէթ մի... պապ պապ շունա պապ, պէնտէ արանա արանա տիւ վանէ օլտում, գարտաշ պէշ պին լիւրալըգ գօնաղըն սէնէթի հաղնըշլըգլա իլամ տէյի վէրմիշիզ, եինէ պու գատըն էյի գատըն ըմըշ քի կէթիւրաի վէրտի, պիր պաշգասընըն էլինէ կէշէ իտի... հիշ, թազըր թազըր պէշ պին լիրայը ճէպիմիզտէն վէրէճէք իտիք... հէլալ սիւտ էմմիշ գտաղնտա պաշգա տըր:

— Պիզ էօյլէ շէյ խապուլ չեւք ընեք հապրում:

— Էյ արթըգ պու էթտիյին էյլիք իւզէրինէ, սէնին իշինի պէնտէն պիլ. սէն հարըն օ տէտիկիմի կէթիւր, պէն օնու սահաթընտա էվտէն չըգարտըգտան սօղրա, շիմտիյէ գատար էվտէ օթուրտուղունըն թէքմիլ քիրալաւընըտա ալանաղըմ:

— Հէմէն Աստուած կէնճ արեւգ պահէ, սաղ ըլլաս հիւանդութիւն չը տեսնաս:

— Հայտէ արթըգ սէն հիշ... վաղիֆէ էթմէ, հարըն օ տէտիկիմի ալ կէլ, իլամընտա պէնտէ գալսըն քի իճ. րանա կէօնտէրէյիմ:

— Արթըգ սէն պիլիւսին տիյէրէք զէվալը Օղաբեր տուտու սէվինճլէ տըշարը չըքար:

— Շիմտի շու գարը հէօճէթի կէթիւրմէմիշ օլտա, պիզիմ պէշ պին լիրա կիթտի իտի:

— Պրալօ, բօլի գալի եինէգա...

— Նէ սէօյլէ Կօրսուն էֆէնտիմ, բօլօթիքասըտա եէրինտէ, եիւրէյի սաֆ:

— Քիրիէ ալօգաթօ, պիզիմ իս պաղալըմ նէ խապարեա վար...

— Էֆէնտիմ, սիզին իշ բէք Կօրունտա տըր. տիւն թարաֆէյն մուհաքէմէյէ կիւրտիք. էվվէլա պէնտէնիզ սէօզ ալարաք Զէյլ գանունը թիճարէթին, թիւճճար վէ պաղիւկեան վէ սարրաֆան թարաֆընտան իմզա օլընան կէրէք պօնօլարըն պէտէլինին նէտէն իպարէթ ի-

տուկինին, ու շիրասը Կիր սէնէ միրուրիլէ շարապ օլանաղը պէտիհի իտուկինտէն...

— Բարտօն միւսիւ ալօքաթօ, մապու քի տէրսի, պէն աղնամաղ պիր շէյ:

— Հէլպէթ աղնամաղսընըլ, ա. մլւրվէթիւմ. պուսլարալօքաթճալաղըրտըլար տըր քի, շօյ տէֆա պիզ պիլէ աղնաեամաղըլ:

(Տէվաւի)

ԹՕՄԹՕՄ



ԳՈՒՇԱԿ

Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի.

Կամ Զուարճալի Բաղդադոյց ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով զիմել խմբագրութեան:

«Հայելի»ի Բ. տարւոյ թիւերն ալ կազմուած կը վաճառին 'ի գին 10 ֆրանք, թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ ըլլալով:

ԸՆԴԱՐՁԱԿ

ՈՐ ԳՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Կամ Հաւաքածոյ



Հին եւ Առ Սօգ. երգերու

208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի

Վառնա Ս. Զարպհանէյեանի գրատունը: Գինն է 2 ֆր. թղթատարի ծախքը գըրատուն վրայ ըլլալով: Դրամի փոխարէն կընդունուի Պուլկարական Դաղ. Գերմ. Անգղ. և Թրքական չի գործածուած նամակադրոշմներ:

13